

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



ՄՀԵՐ ՔՈՒՄՈՒՆՑ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԼՈՒՍԻՆԵ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԿՈՈՆԻԶՈՐ-ԽՈՐԵԱ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեղագրական եւ բառաբանական փորձ

ՆԵՐԿԱՅԻՍ Կոռնիձոր գյուղում եւ նրա ամբողջ շրջակայքում տարբեր ժամանակներում՝ սկսած Ք. ա. 2-րդ հազարամյակից, եղել են բնակավայրեր, մինչեւ օրս պահպանված են հին գերեզմանոցներ, նախաքրիստոնեական շրջանի հուշարձաններ, մատուռներ եւ այլն¹։ Տարածքը՝ ներառյալ Կոռնիձորը երեք կողմից շրջապատող ձորերը, որ իջնում են դեպի Հակարի գետ, հրվանդանի տեսք ունի, բնակլիմայական պայմանների շնորհիվ բարենպաստ է բնակության համար։ Այս տարածքով են անցնում հիմնական ճանապարհները դեպի Արցախ։ Պատմությանից հատկապես հայտնի է Կոռնիձոր-Հարար առեւտրային ուղին։

Գյուղի մասին պատմական տեղեկությունները շատ չեն։ Պատճառներից հիմնավորն այն է, որ Կոռնիձորը, ինչպես շրջանի շատ բնակավայրեր, անընդհատ տեղափոխվել է, բնակչության տեղաշարժեր նույնպես շատ են եղել. այդ են վկայում արձատներով Արցախի, Պարսկաստանի, Գորիսի տարբեր բնակավայրերից այստեղ ապրող կոռնիձորցիների սերունդները։ Հիմա դժվար են տարբերվում բնիկներն ու եկվորները։

Նոր գյուղում պատմամշակութային հին արժեքներ առանձնապես չեն արձանագրվել, իսկ տարածաշրջանը առանձնապես ուսումնասիրված

¹ Կոռնիձորի պատմամշակութային անշարժ հուշարձանների ցանկում բնակելի երկու հնավայր է նշվում՝ վերագրված ժէ.-ի. դդ.։

չէ՝ չնայած հնագիտական նշանակությամբ բազմաթիվ հուշարձանների գոյությունը:

Վաղ եւ միջին շրջանների պատմական սակավ տեղեկությունները, ըստ էության, անվստահելի են դարձնում գյուղի անվան, տեղի եւ այլ հարցերի վերաբերող եզրակացությունները:

Առայժմ մեր ունեցած առաջին տեղեկությունները, որոնցում հիշատակվում է Կոռնիձորը, սկսվում են 18-19-րդ դարերից: Եւ սա այն դեպքում, երբ գյուղը բավականին մեծ է եղել²: Փաստորեն այն եղել է նաեւ մելիքանիստ. «Մելիք-Բարխուդարեանների նախահայր Մելիք-Բարխուդար Ա. գաղթել է Լոռուց Զանգեզուրի նախ Կոռնիձոր եւ ապա Տեղ գիւղը»³, որ ենթադրել է տալիս Կոռնիձորի՝ շրջակայքում ունեցած գերակա դիրքի մասին: Արեւելքից Զանգեզուրի համար եղել է դարպաս, երկրին սպառնացող առաջին հարվածները կրել է Կոռնիձորը. հավանաբար նաեւ այդ է պատճառը, որ գյուղը անընդհատ տեղահանության է ենթարկվել:

Այսպես, օրինակ, Ներսեսով Միրզա Յուսուֆը⁴, նկարագրելով պարսկական բանակի մուտքը Արցախ, նշում է նաեւ Կոռնիձոր կամ Քուրունգուր անվամբ բնակավայր. «Աբաս Միրզան լսելով այս ուրախալի լուրը՝ բանակը իր ճամբարում է թողնում եւ հաջորդ օրը մոտենում Կոռնիձոր (Քուրունգուր) գյուղին»⁵:

Պատմության շարունակությունից հասկանում ենք, որ Կոռնիձորը հիշյալ ժամանակաշրջանում՝ 18-րդ դարից սկսած, արդեն կրում էր օտար ազդեցություն. «[Աբաս Միրզան գերիներին] վերցրած գնում է Կոռնիձոր գյուղը, ուր հյուրընկալվում է Հաջի Աղալարի կողմից: Այնտեղ նրան են ներկայանում Ամիր խան սարդարն ու Մեհդի Ղուլի խանը, ողջունում, հետո շնորհավորում են նրան»⁶, իսկ շրջակայքում տարածված էին քրդական ու թյուրք-թաթարական տարբեր ցեղեր՝ «...դելաղորդե, զարգյար ու ջեւանշիր...»⁷: Եւ այդ ամենով հանդերձ, այնուամենայնիվ, նաեւ այս բնակավայրի շնորհիվ է, որ Գորիսի շրջանը պահպանել է

² Օրինակ՝ ըստ Զ. Կորկոտյանի «Ճորճրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931)»-ի տվյալների՝ 1831 թվականին Կոռնիձորն ունեցել է 491 բնակիչ, որից 486-ը՝ հայ, 5-ը՝ իսլամ:

³ Ե. Լալայեան, Հանդէս, գիրք Դ., թիւ 2, Շուշի, 1898, էջ 11:

⁴ Մ. ՆԵՐՍԵՍՈՎ, Ճշմարտացի պատմություն, թարգմանություն՝ բնագրից, ներածությունը եւ ծանոթագրությունները Ք. Կոստիկյանի, Երեւան, 2000, էջ 40 (այսուհետ՝ Մ. ՆԵՐՍԵՍՈՎ, նշւ. աշխ.):

⁵ Մ. ՆԵՐՍԵՍՈՎ, նշւ. աշխ., էջ 40:

⁶ Անդ:

⁷ Անդ:

ավանդույթները, բարբառը: Փաստորեն այստեղ են բեկվել նաեւ ազգային նկարագրին սպառնացող օտարամուտ երեւույթները լեզվի եւ մշակույթի առումով: Մենք այն կարծիքին ենք, որ Կոռնիձորը որեւէ ժամանակաշրջանում առանց հայի չի եղել, այստեղ վերաբնակեցվածներն էլ արագ մերվել են տեղական սովորույթներին, շարունակել կիրառել տեղական բառն ու բանը:

Գյուղանվանը վերաբերող բոլոր հիշատակություններում պահպանված է հիմքը, որ, բնականաբար, կրել է հնչյունական որոշակի փոփոխություններ: Մինչեւ օրս էլ Կոռնիձոր անունը տարբերակներ ունի:

Կոռնիձոր կամ Կոնաձոր է հիշատակում Դ. Ալիշանը մի այլ աշխատանքում այս տարածքի բնակավայրերի մասին խոսելիս⁸. «Եւ Կոռնիձոր կամ Կոնաձոր ի հիւսիսոյ նորա 75 տամբք եւ սաքաշէն եկեղեցեաւ մեծաւ»⁹:

Կոռնիձոր տեղանվան տարբերակները, հավանաբար, ավելի են շատացել, երբ արդեն 15-րդ դարից սկսած Հակարի գետի երկու ափերն սկսել են հայաթափվել ու մահմեդականներով բնակեցվել¹⁰: Ըստ էության հանդիպակաց Հարար եւ Կոռնիձոր գյուղերն են «թերակղզիացված» եղել՝ երեք կողմից շրջապատված օտար բնակիչներով: Օտարի նկատմամբ հակազդեցությունը, բնականաբար, բացարձակ չի եղել. կարծում ենք՝ այս տարածքի տեղանուններն էլ են փոփոխվել՝ տարբեր բնույթի շփումների հետեւանքով: Այդ անուններից շատերը, այնուամենայնիվ, պահպանել են բարբառային արտասանությունը, այդ թվում հին բնակատեղիներ՝ Խոտխուփ (խոխուփ, Խոխօփ), որ գտնվում է ներկայիս Կոռնիձորից արեւմուտք՝ դեպի Խնձորեսկ եւ Տեղ գյուղեր, Սըռլյեղցի (Սըռլիձի, Սիըռնլյէլիձի) սրբավայրի բնակատեղին՝ Կիրւծօր կամ Գիրաձօրօ, այլեւ՝ Սիմնաձօր, Միֆել դւրւս, Մուգումաց բաղ, Պիձի ձօր, Մըլձ ձօր, Կըֆէվանց ձօր, Կըռիմ

⁸ «Գլխաւոր տեղի գաւառիս է աւանն ԳՈՐԷՄ Կիւրիւս կոչեցեալ այժմիկ, ի հարաւակողմն առվտակի միում Պարկուշատայ ի խորահովտի 3900 բարձու, 200 տամբք եւ ամրոցաւ. յեղից նորակայ Խնձորէսք անուանի ի պատերազմունս Դափանեցոց ի սկիզբն անցելոյ դարու քաջութեամբ բնակչացն արանց եւ կանանց... Քարահունջ ի հարաւոյ Խնձորէսքայ, ի գոգ ժալոցի, յորոց բարձանց իջանեն ջուրք. ի հիւսիսոյ եւ ի մտից Տեղ, Խազախ, Խզնավար, Խոտ, եւ այլն». տես Դ. ԱԼԻՇԱՆ, Տեղագիր հայոց մեծաց, Վենետիկ, 1855, էջ 169 (այսուհետ՝ Դ. ԱԼԻՇԱՆ, Տեղագիր Հայոց Մեծաց): Հետաքրքրական է այս հատվածը տեղագրական առումով, բայց մեզ հայտնի է, որ նշված գյուղերի միջակայքում եւս այլ բնակավայրեր են եղել, որոնք, հնարավոր է, աչքի չեն ընկել կամ ուղղակի բաց են թողնվել:

⁹ Դ. ԱԼԻՇԱՆ, Տեղագիր Հայոց Մեծաց, էջ 169:

¹⁰ Տես Դ. БАБАЯН, Красный Курдистан: Геополитические аспекты создания и упразднения, «21-й век», №2, 2005.

տափ, Ճրբարին պա՛շ (նրբարին) եւ այլն: Կան նաեւ օտար կամ օտար բաղադրիչով անուններ՝ Միրզի շէն, Ահմադ աղա, Յագուն գոնէշ եւ այլն:

Կոռնիձոր անվան հիմքով երկու հիմնական բնակավայր-տեղանուն ենք արձանագրում այս տարածքում՝ Կիրաւծօր կամ Գիրաւծօր, որ գտնվում է նոր գյուղի հարավարեւելյան ձորահովտում՝ Սըռլէղցու մոտակայքում, եւ Խօրխօր կամ Խօրխօռ: Կոռնիձորը «չորս անգամ տեղափոխվել է: Ամենահին գյուղը կոչվել է Խորեա (Խորանա)»¹¹:

Հարցի քննութեան համապատկերում, կարծում ենք, այդքան էլ էական չէ, թե որ ժամանակ գյուղը որ մասում է եղել, բայց եւ պարզ է, որ Ս. Օրբեկյանի շրջանում Աղահեճք եւ Հաբանդ գավառի գյուղերի անվանացանկում բացակայում է Կոռնիձոր անունը, որ, ամենայն հավանականութեամբ, հետագայում է փոխվել:

Միջնադարյան Սյունիքի հայկական բնակավայրերը, սովորաբար, ունենում են եկեղեցիներ, մատուռներ կամ ժամատներ՝ շրջակայքում գերեզմաններ: Դրանք կարելի էր ունեն բնակավայրերի տեղադրության եւ տարբեր հարցերի որոշակիացման համար:

Կոռնիձորի տարածքի սրբավայրերից ամենահայտնին Սըռլէղցին¹² է, որ երկու ձորերի արանքում է՝ ձորի նկատմամբ բարձրագիր վայրում: Շրջակա գյուղերի բնակիչների ավանդազրույցներից մեկի համաձայն՝ Սըռլէղցու ձորում ապրել ու ստեղծագործել է Մովսէս Խորենացին, եւ հենց ինքը՝ Պատմահայրն է կառուցել Սըռլէղցին՝ իբրեւ ճգնարան՝ շրջապատված պարսպով: Որպես իրականություն՝ նշում են, որ այդ ձորը հետագայում կոչվել է Կիրանօր (Կիրաւծօր)՝ «գրողի կամ գրչության ձոր», քանի որ այստեղ եղել է նաեւ դպրատուն: Շրջակայքի մյուս եկեղեցիների, բնակատեղիների, մասնավորապես Կոռնիձոր, Խորեա եւ մի քանի այլ տեղանունների մասին կխոսենք ստորեւ:

Կոռնիձոր գյուղն ունեցել է տարբեր անուններ՝ Գերինձոր, Գենինձոր, Գերինգուր, Գերինգուր, Գորունգուր (Gorunzur), Կանանձոր, Կերենգուր, Կոռինձոր, Կոռինանձոր, Կոռնանձոր, Կոռնանձոր, Կոռնինձոր, Կոռնանձոր, Կոռնինձոր¹³: Բանավոր զրույցներում հիշատակվում են նաեւ մի շարք անուններ, որոնք

¹¹ Ս. ՍԻՄՈՆՅԱՆ, Կոռնիձոր, Երեւան, 2006, էջ 22 (այսուհետ՝ Ս. ՍԻՄՈՆՅԱՆ, նշւ. աշխ.):

¹² Սուի եղցիի կամ Սըռլէղցու դամբարանում հայտնաբերվել են վաղերկաթեդարյան իրեր՝ զենքեր, լանջապանակ, զարդեր, անոթներ: Դամբարանի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բնակավայրը թվագրվել է Ք. ա. III–I հազարամյակով (այս մասին մենք տեղեկացանք Օ. ԽՆԿԻՎՅԱՆԻ, «Սյունիքը բրոնզի եւ երկաթի դարաշրջանում» անտիպ աշխատանքից):

¹³ Տէն Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3, Երեւան, 1991, էջ 219 (այսուհետ՝ Տեղանունների բառարան):

իբրեւ տրված են եղել գյուղին՝ Կըրընկածրօ, Խօնիծրօ, Խօրումծրօ, Խօրյածրօ, Կէռածր եւ այլն: Կոռնիծոր անվամբ գյուղ առաջին անգամ հիշատակվում է Տաթևի Վանքի նոր հարկացուցակում՝ 1781:

Որեւէ վկայություն չկա, թե մինչեւ Կոռնիծոր կոչվելը որ անուն է կրել բնակավայրը եւ որտեղ է գտնվել մինչեւ սարահարթ բարձրանալը: Հարցն ավելի է դժվարանում որոշակի անուն պահպանված չլինելու պատճառով. վերոնշյալները բոլորն էլ ձեռով մոտ են Կոռնիծոր անվանը, բայց նշանակության առումով կարող են տարակարծություններ առաջ բերել՝ գեր-ի-, գեմ-ի-, գոր-ու-, կամ-ա-, կերեմ-, կոռ-ի-, կոռ-նի- խոր-նի եւ այլն: Սրանք արմատներ են, որ ունեն տարբեր նշանակություններ: Նկատի ունենալով Սոփի եղջիից հարավ՝ Կոռնիծորի տարածքի հին բնակավայր լինելու հանգամանքը¹⁴, այլեւ գյուղի ռազմավարական նշանակությամբ դիրքը՝ գրեթե համոզված ենք, որ գոնե Ստեփաննոս Օրբելյանի «Պատմություն» մեջ Տեղ, Խնածախ, Խնծորեսկ, Շուռնուխ գյուղերի կողքին պետք է որ նշված լիներ մի բնակավայր, որ գտնվել է Կոռնիծոր գյուղի տարածքում (ավելի հավանական ենք համարում դեպի Աղավնո գետ իջնող ձորահովտում, այլ ոչ թե ժամանակակից տեղում):

Կոռնիծորին վերաբերող տարբեր ուսումնասիրություններում, այլեւ ստուգաբանական աշխատանքներում այս հարցը գրեթե բացակայում է՝ մատենագիտական եւ այլ բնույթի աղբյուրների սղության պատճառով: Ստեփաննոս Օրբելյանից հետո այլեւ չի հիշատակվում Խորեա գյուղանունը, այն նույն բառի հնչյունական տարբերակներով պահպանված է տեղացիների շրջանում, որ տրվում է հնամյա մի բնակավայրի, որ «իրենից ներկայացնում է մի կիրճ, որտեղ ձորից 80-100 մետր բարձրության վրա՝ ուղիղ լեռների ճակատներից, փռված են ժայռակերտ քարանձավներ մոտ 40 հատ»¹⁵, Խօրյա, Խօրխօփ, Խօրխօր, Խըրխօփ, Խօրխօռ եւ այլ անուններով: Հիմա տեղացիներից շատերը այն ճանաչում են Խըրխօփ կամ Խօրխօփ ձեռով: Ղ. Ալիշանը նշում է, որ պատմական շրջանում, այլեւ Տաթևի վանքին տրվող հին հարկացուցակում Կոռնիծորը չի հիշատակվում¹⁶: Բայց արդեն 18-րդ դարի վերջերին, ինչպես նշում է Ղ. Ալիշանը, «Կուռնի ձոր կամ Կոռնի ձոր» գյուղն ունեցել է 250 տուն¹⁷:

¹⁴ Հնաբանական շերտը սկսվում է Ք. ա. II հազարամյակից: Տարբեր դարաշրջանների գտածո իրերը վկայում են, որ այս տարածքում մշտապես բնակչություն է եղել:

¹⁵ Ս. ՍԻՄՈՆՅԱՆ, նշւ. աշխ., էջ 22:

¹⁶ Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսական, Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 263 (ասյուհետ՝ Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսական):

¹⁷ Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսական, էջ 263:

Ա. Մարգարյանը տեղանվան ստուգաբանության մեջ¹⁸ տեղորոշում է նույնանուն՝ Կոռնիձոր հին գյուղատեղին, որ տեղափոխվել է սարահարթի. դարում:

Հեղինակներից ոմանք կարծում են, որ Կոռնիձորը նույն Խորեա անունով բնակավայրն է, որտեղ ապրել է Պատմահայրը¹⁹: Ս. Խանզադյանն իր «Հայրենապատում» աշխատության մեջ հղում է ժողովրդական պատումը²⁰, համաձայն որի՝ Խորեա||Խոռվ հին բնակավայրում, որ ժամանակ անց կոչվել է Կիրաձոր կամ Գիրաձոր, թաղված է Պատմահայր Մովսես Խորենացին՝ Սրբեղցի կոչված սրբավայր-գամբարանում: Այս տեսակետը հիմնավորված է Խորենացու երկի թարգմանության առաջաբանում Ստ. Մալխասյանցի կողմից. «Ավելի հավանական է կարծել, թե նա (խոսքը Մովսես Խորենացու մասին է՝ Մ. Ք., Լ. Ն.) ծնված է Սյունիքում, Հաբանդ գավառի Խորեա անունով փոքր գյուղում, որը հիշում է Ստեփաննոս Օրբելյանը»²¹:

Տարբեր են ժողովրդական ստուգաբանությունները Կոռնիձորի վերաբերյալ. կոռ>կեռ ձորեր ունեցող վայր, կեռ>կեռիք «ատամ» + ձոր՝ հին գյուղի՝ ատամնաձեւ ժայռերի նմանությունից առաջացած անվանում է, կրեռ||կրռ||կոռ «կապ», բարբառախմբում՝ /քր/կոռ + ձոր եւ այլն: Այս վերջինը նույնպես հատկանշական է տեղանվան համար, քանի որ, ինչպես նկարագրության մեջ նշեցինք, գյուղի ձորամասը Սյունիք-Արցախ կապող մասում է: Նշվում է նաեւ, որ գյուղի Կոռնիձոր անունը կապվում է այս ձորում խաների մոտ տեղացիների կատարած կոռային աշխատանքի հետ²²:

Կան նաեւ հակառակ պնդումներ լեզվաբանական տեսանկյունից. օրինակ՝ Խորեայ գյուղանունը չի կարող վերագրվել Մովսես Խորենացուն՝ հնչյունական անհամապատասխանության պատճառով²³: Այնուամենայնիվ, առկա է մնում գրավոր աղբյուրներից Խորեայի չվկայվելու

¹⁸ Հստ հեղինակի ստուգաբանության՝ ԿՈՐՆԻՁՈՐ-ը բաղկացած է բարբառախմբում առկա կոռն>կոռնն (>կոռն) «բազուկ, ձեռք, թեւ, ուսից մինչեւ դաստակը կամ արմունկից մինչեւ դաստակը» բառի սեռական ձեւից (հմտ. Կուռն-կուռնի||կոռն-կոռնի՝ ձորեզրի՝ բազկի նման լինելն է արտահայտվում) եւ ձոր բաղադրիչներից (հմտ. Խաշի ձոր, Նեղ ձոր, Պիծի ձոր եւ այլն)՝ նկատի ունենալով տեղանքը (այս մասին տես Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Ստուգաբանություններ, Երեւան, 2015, էջ 186–187):

¹⁹ Տես ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմություն հայոց, խմբ. ներած. եւ ծանոթություն՝ Ստ. Մալխասյանցի, Երեւան, 1981, էջ 7–8 (այսուհետ՝ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմություն Հայոց):

²⁰ Ս. ԽԱՆԶԱԳՅԱՆ, Հայրենապատում, գիրք Ա., Երեւան, 1980, էջ 400:

²¹ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմություն Հայոց, էջ 7–8:

²² Տեղանունների բառարան, էջ 219:

²³ «Հայրենիք» օրաթերթ, թիվ 9903, 1944, էջ 1, 3:

եւ գրանից հետո Կոռնիձորի հիշատակվելու հարցը, որ շատերին է հետաքրքրել:

Միաժամանակ դժվար է որոշել, թե նշվածներից ո՞րն է վերագրվում Կոռնիձորին, որովհետեւ գրեթե բոլորն էլ, ինչպես նկատում ենք, ձեռքով եւ իմաստով կարող են լինել տեղանվան հիմքը: Մեր կարծիքով դիպուկ է Ա. Մարգարյանի տեսակետը, ըստ որի՝ կօնը արմատից է գյուղը ստացել Կոռնիձոր տեղանունը: Մենք այս տեսակետին հավելում ենք, այլեւ փոքրիկ ճշտում կատարում, որ ոչ թե «բազուկ, ձեռք», այլ նրանից լծորդված «հաջորդ, մյուս» իմաստով բառն է կցվել տեղանվանը: Բարբառախմբում, ինչպես նաեւ գրական տարբերակներում, կօնը բառը նշանակել է նաեւ «կողք, կողմ, թեւ»: Այն համանիշ է անգյուն, արաբ. փոխառյալ քարափ բառերին, այսինքն՝ Կոռնիձոր՝ «այն մի կողմի ձոր, այն մի թեւի ձորը»:

Սա հարցի մի կողմն է. տակավին առկա են մնում այլ հարցեր. ո՞ր բնակավայրի անունից է ստացվել Կոռնիձոր անունը, կամ գուցե նախապես եղել է տեղանուն, հետո կցվել է գյուղանվանը, իսկ գուցե դա մի հին գյուղանուն է, որ իրենց հետ տարել են բնակիչները:

Հագարի գետի ձախ ափին նշմարվում է հին բնակատեղի՝ Կիրինձոր կամ Կիրիժոր (Գիրինգուր) անվամբ: Նրանից փոքր-ինչ հարավ՝ Նղեգնու ձոր (Ղամիշ դարա) անվամբ ձորակում, վերջերս հայտնաբերվել են արհեստական քարայրներ, որոնցից մեկը ժայռափոր եկեղեցի է²⁴: Իսկ

²⁴ Այն փորված է ձորի հարավահայաց լանջի հրաբխային բեկկալի (հատակապատում) տակ նստած մանրահատիկ կավահողի հաստ շերտի մեջ եւ ամբողջովին ձեռակերտ է: Հուշարձանի կոորդինատներն են՝ 39 32 08,5 N. 46 33 10,2 E. Alt.1000 մ: Եկեղեցու դիմաց բացվում է մոտ 3 մ լայնությամբ փոքր հրապարակ, որից հետո գալիս է կտրուկ զառիթափը: Եկեղեցու արեւմտյան եւ արեւելյան կողմերի բեկկալի ուղղահայաց մերկացումների եւ նրա կրնկի շփման գծի մեջ բացված են բնական ու ձեռակերտ ոչ խորը անձամբեր ու ժայռածածկեր: Շրջակայքում բնակավայրի, գյուղատեղիի հետքերը մաշվել են: Այսօր ձորում նաեւ աղբյուր եւ առվակ չկա: Եկեղեցին հորինվածքում միանավ բազիլիկ է՝ ուղղանկյուն խորանով: Հարավային ճակատից բացված միակ մուտքի եզրագծերը փլուզված են: Ուղղանկյուն սրահը պսակված է երկկենտրոն թաղ հիշեցնող, մինչեւ 3,28 մ բարձրությամբ առաստաղով: Ուղղանկյունուն մոտեցող սեղանաձեւ խարանը առանձնանում է սրահից նեղ, ելուստավոր, ժամանակին կամարակիր մույթերով: Խորանն ունի բարձր (0.8 մ) բեմ եւ այնտեղ տանող մեկ աստիճան՝ հյուսիսային մույթի տակ: Այն, ի տարբերություն սրահի, պսակվում է կտրած կիսագնդի նմանվող ցածր գմբեթաղով: Խորանի բեմի ճակատային գիծը քայքայված է եւ այսօր ներկայացնում է կոր բացվածք: Խորանի հյուսիսային պատին պահպանվել է նեղ, կամարակապ որմնախորշ: Սրահի ու խորանի հատակները հողածածկ են: Եկեղեցու պատերն ու առաստաղը ներքուստ սվաղված է եղել հունցած կավի սեւացած սվաղով, որը հիմնականում պահպանվել է (այս մասին տե՛ս www.sarc.am): Այս ծավալուն նկարագրությունը մենք ներկայացնում ենք, որովհետեւ լուրջ հիմքեր են ձեւավորվում կարծելու, որ այն եղել է վաղ միջնադարյան անապատ-դպրոց: Այս տիպի քարանձավներ առանձնապես շատ չեն եւ հիմնականում հանդիպում է Սյունիքում: Հնարավոր է, որ այն

գուցի մի ժամանակ հենց այստեղ է եղել գյուղը: Այս եւ նման հարցեր լիարժեք պատասխան ունենալ չեն կարող:

Այսպես կարող ենք հիշատակել այս տարածքի մի քանի հին բնակավայրերի անուններ, որոնք, սակայն, չեն հանդիպում մատենագրական աղբյուրներում: Հակված ենք այն սկզբունքին, որ որեւէ տեղանվան մեջ պետք է գտնել եթե ոչ հին, ապա գոնե Ստեփաննոս Օրբելյանի՝ Հաբանդն գավառում նշած գյուղանուններից, որովհետեւ համոզված ենք՝ այս տարածքում Օրբելյանի շրջանում եւ դրանից առաջ էլ բնակչություն է եղել, կան նյութական մշակույթի աղբյուրներ, եւ հետագա հիշատակումներից էլ պարզ է դառնում, որ այն բնակչությամբ եւ տարածքով չի զիջել շրջակա գյուղերին:

Հետաքրքիր ավանդազրույցներ են պահպանված այս ձոր-բնակավայրերի շուրջ²⁵: Հին Կոռնիձորը, ինչպես նշում են, գտնվել է Խորեայի տարածքում՝ Աղավնոյից սկիզբ առնող երկու խոր ձորերից մեկի թեւի՝ ներքեւի հյուսիսային մասում, իսկ մյուս բնակավայրը՝ Կիրածորը, Կոռնիձոր գյուղից արեւելք է՝ դեպի Տեղի հարավային մասը՝ Կոռնիձորից մոտ 2 կմ հեռավորության վրա: Հին բնակավայր է նաեւ ավելի հարավում գտնվող ԱՀ Քաջաթաղի շրջանի Վանոցա գյուղը, որ, կարծում են, Ստեփաննոս Օրբելյանի նշած 20 միավոր հարկով նույնանուն բնակավայրն է: Եւ փաստորեն՝ Կոռնիձորի շրջակայքում այսօր երեւում են հին բնակավայրեր, իսկ այդ տարածքներում պահպանվել են տեղանուններ, որոնք, փաստորեն, նշվում են նաեւ Օրբելյանի «Պատմության» մեջ: Մենք դրանցից հատկանշում ենք երկուսը՝ Շոռնոխոս եւ Խորեա²⁶:

Քիչ հավանական չէ, որ Ստեփաննոս Օրբելյանի նշած Շոռնոխոս գյուղը իր անունը ստացած լինի Կոռնիձորից մոտ 2.5 կմ հարավ-արեւմուտք

հիշյալ շրջանի Սյունյաց դպրոցի նախատիպն է, որտեղ սովորած գիտուն, հուշակ վայելող աշակերտները հետագայում կոչվել են քերթողներ, ինչպես պատահել է հայոց մյուս դպրոցներում՝ իմաստասեր, շնորհալի եւ այլն:

²⁵ Տե՛ս Ս. ՍԻՄՈՆՅԱՆ, նշւ. աշխ., էջ 28-32:

²⁶ Վանոցայի մասին մեր ուսումնասիրությունները շարունակվում են: Նախնական կարծիք ունենք, որ այն քրդերով է բնակեցվել: Ադրբեջանական աղբյուրներն ուսումնասիրելիս գտանք, որ այս տարածքում դեռեւս խորհրդային շրջանում գրանցված են եղել այլ հուշարձաններ, որոնք ուշ միջնադարյան կոթողներ են եւ բնույթով ոչ թյուրքական՝ գերեզմանաքարեր՝ արեւի պատկերներով, թուղունը ձեռքին մարդու քանդակ, քարակառույց ուղղանկյուն մզկիթ՝ 1790-1791 թթ. կառուցված (սա հավանաբար հայկական ժամ-եկեղեցու վերափոխում է, քանի որ պատերին կան հայկական գրով ու նախշերով քարեր), Մելիք Աժդարի դամբարանը (թվագրվում է ԺԵ. դ.), խոյի, ձիու քարաքանդակ: Նույն վայրում առկա մյուս հուշարձանները արդեն հայկական են՝ նախաքրիստոնեական շրջանի դամբարանադաշտ, կնոջ քարաքանդակ մարմին, հին գերեզմանոց, Հովվի քար (հիմա տեղում չէ) <http://anl.az/el/emb/QARABAQ/lachin/abideler.htm/>:

Շուռնուխի խաչեր²⁷ կոչված բնակավայրի անունից, որտեղ պահպանված են ոչ միայն հին գերեզմաններ, բնակավայրի հետքեր, այլև Ք.ա. մոտ 2-րդ հազարամյակով թվագրվող դամբարան։ Այս հարցը վիճահարույց է մնում, անհայտ է նաև գյուղանվան ծագումը։ Թե ինչ հիմունքով է Օրբեյանը Հաբանդն գավառի գյուղերը դասավորել Տաթևին հարկացանկում, նույնպես անհայտ է։ Սա հարցի մի կողմն է, եւ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ կարող են լինել համընկնումներ, կրկնություններ, վերանվանումներ եւ այլն։

Կարծում ենք՝ Ստեփաննոս Օրբեյանի՝ հին ցուցակում նշված այս երկու, այլև Վանոցա բնակավայրերի շրջակայքում, կամ այս գյուղերից հենց մեկում է եղել հին Կոռնիձորը²⁸։ Ավելի հավանական ենք համարում խորեա գյուղի անվան փոխադրումը (գուցե փոխանցումը) Կոռնիձորի տեսակետը, հետեւաբար՝ այստեղից գյուղի փոխադրումը ձորի մյուս թեւը, ապա սարալանջ, եւ վերջապես սարավանդի վրա։ Այս տարածքի որոշ անուններ ժամանակի ընթացքում փոխվել են։ Հենց այդ հիմունքով, կարելի է ենթադրել, Կոռնիձոր անվանումը առաջ է եկել այն ժամանակ, երբ Աղավնոյի ձորահովտում բավականին երկար ժամանակ հաստատվել էին այլադավան ցեղեր, եւ աղավաղումով²⁹ խորեա-ն³⁰ դարձել է կոռնի³¹։

²⁷ Մինչեւ օրս էլ Կոռնիձորում եւ խնձորեսկում ավանդազրույց է պահպանված Շուռնուխ անվամբ հնավայրի դիմացի լեռան մասին։ Կոռնիձորի 17 աղջիկներ (խնձորեսկում ավանդազրույցը այլ բովանդակություն ունի) այդ լեռան վրա կռվել են Լենկթեմուրի զինվորների դեմ՝ փորձելով կասեցնել առաջխաղացումը դեպի գյուղ, բայց տեսնելով, որ անզոր են, իրենց ցած են նետել ժալոհից, ու բոլորն էլ զոհվել են, որի համար էլ այդ բնական ամրոցը անվանել են Աղջկա բերդ։ Բացի այդ՝ այս բնակատեղիում հայտնաբերվել են կուռքեր, հնագույն, հին եւ միջին շրջանների իրեր եւ այլն։

²⁸ Ստեփանոսի Սինեաց եպիսկոպոսի, Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 375։

²⁹ Այս տարածքում արդեն Ղ. Ալիշանի հիշատակում է օտար անուններ, որոնցից որոշները մինչեւ օրս էլ պահպանվում են։

³⁰ Հ. Հյուբշմանը Նորավանքի խորանոց անապատի անվան խոր արմատի հիմքում դնում է «խորունկ կամ խորդուբորդ» իմաստը (տե՛ս Հ. ՀԻՒՐՇՄԱՆ, Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 355)։ Կասկածից վեր է, որ խորեայ բառի արմատի հիմքում ընկալվել է «խոր» իմաստը (տե՛ս Հ.Ր. ԱՃԱՌԵԱՆ, Հայերէն արմատական բառարան, հտ. 2, Երեւան, 1926, էջ 404)։

³¹ Քրդ. «խոր, խորք»՝ kûr>kûrâni||kûrâyi||kuri, պրսկ. «ձոր, խոր»՝ kûr||gûr եւ տարբեր ձեւափոխումների ազդեցությամբ մեզ հասել է Կo/ռ/ւ/նիձöր (կոռնրձնուրացի||կոռնրձնուրացի, Գուրիզուր, Գիրիզուր) ձեւով, որն էլ ժողովրդական ստուգաբանությամբ աղերսվել է կոռնր բառին։ Սա կարեւոր կովաններից մեկն է խորեա>Կոռնիձոր անունների համար, որ չի նկատվել մինչեւ այժմ եղած ուսումնասիրություններում։ Սյունիք-Արցախ բարբառային տարածքում եւս արձանագրվում է կorի||կorե՝ «փոս, փոքր ակոս» իմաստներով բառը, որ գործածվում է նաեւ գրք.՝ «արտերում բացված առու» իմաստով։ Այս եւ բարբառային այլ տարբերակներ քննության նյութից դուրս են։ Օտար ազդեցությունների հետեւանքով

Հետեւությամբ գալով հարցի որոշակիացմանը, պետք է կարծել, որ Կոռնիձորը առաջ է եկել հորեա գյուղից հետո, կրել այդ անունը, ապա տարբերակներով հասել մեր օրերը, եւ միայն տեղանունն է պահպանվել աղավաղումներով՝ հորխորաձոր, հորխոփ, ինչպես՝ Քոչգեղ>Քօչիղ, Թողթուն>Դավուտառ³² եւ այլն։ Սովորաբար եթե գյուղանունները նույն խոսվածքում ունենում են մի քանի տարբերակներ, ապա ենթադրելի է, որ դրանք աղավաղումների են ենթարկվել տեղահանության, բնակչության ներգաղթի, լեզվի փոփոխության եւ նման երեւույթների, այդ թվում օտար ազդեցության հետեւանքով։ Որոշ պարագայում, օրինակ, Կոռնիձոր բառի ի-ն ոչ թե գրաբարի նախդրային նշանակություն ունի, այլ -եայ ածանցի է>ի մնացուկ է (Կոռնիձոր անվան վկայության շրջանում՝ 18-րդ դար, եւ դրանից էլ առաջ գրաբարյան նախդիրները բարբառախմբի տեղանուններում եւ ընդհանրապես բառերում այլեւս միազնել են իմաստը), ուստի՝ Կոռնիձոր-ը նախապես պիտի որ եղած լինի Կօռէ(>ի)ծօր՝ առաջացած՝ գրբ. հոր(-եայ) արմատից, որի աղավաղումից հետո առաջ է եկել ժողովրդական ստուգաբանությունը՝ Կոռնիձոր։

Փաստորեն՝ Կոռնիձոր բառը Օրբելյանի հիշատակած հորեայ գյուղանվան աղավաղված տարբերակն է, որ տեղացիների խոսվածքում փոխվել եւ բարբառային տեսք է ստացել։ Իսկ ինչո՞ւ ենք նշում, որ այն աղավաղումի հետեւանք է։ Բարբառախմբում առկա է իս>կ անցումը՝ խէնեպ>կընէպ, բայց օրենք չէ, եւ ինչպես նկատում ենք, տարածքում երկար ժամանակ ապրող իրանական լեզվի կեղծ պատճենում է՝ խոր>կօր։ Վերջինիս հաջորդել է արդեն բարբառախմբում տարածված հնչյունական տեղաշարժերը՝ պայմանավորված ժողովրդական ստուգաբանությամբ՝ ր-ն դարձել է ո, հմմտ.՝ կոր>կօռ, ոսկր>վրէսկեռ, փետոր>թէփուռ, փթուր>փրթրո-օկ եւ այլն։ Այս ամենից էլ զօգրվում է հետեւյալը՝ խօրեայ>խօրին>կօրին>կօռնի։

Կարելի է եզրակացնել, որ, իսկապես, հորեա գյուղի անունն անցել է Կոռնիձորին, որը, փաստորեն, մոտ մի երեք անգամ փոխել է իր տեղը, որի ընթացքում կարող էին շատանալ նաեւ անվան տարբերակները։

հնարավոր մյուս ձևերը հիմքեր չունենալու պատճառով նույնպես չենք քննում (օրինակ՝ արաբերենից միջին թյուրք., պրսկ. անցած՝ kura (قۇرا) (հավանաբար >karya(t) قارى(ت), որ ունի «գյուղ» իմաստը, կամ քրդ.՝ kor «1. դաշտ, մարգագետին, 2. ազատ տարածություն»)։

³² Քոչգեղ>Քօչիղ, Թողթուն>Դավուտառ անունների աղավաղված ձևերը պայմանական ենք նշում՝ որպես կանխավարկած։ Մենք չենք հանդիպել այդ տեղանուններին վերաբերող որեւէ ուսումնասիրության։

Այդպես պատահել է նաեւ այլ վայրերում՝ Կյորեա, Խնձորեսկ, Քարաշեն եւ այլն, եւ հետաքրքրականն այն է, որ նրանցից շատերը տեղափոխությունից հետո էլ պահպանել են բնակավայրի անունը: Բնակավայրի տեղադրության կանխավարկածն այս է՝ Հին Կոռնիձորը գտնվել է Խորեա|| Խորյա վայրում, հետո տեղափոխվել է Սըռնըեղցի սրբավայրի մոտակայքը, ապա մինչեւ Կոռնիձոր հասնող ձորակի լանջը, ուր փորվել են այրեր, ապա վերեւ՝ սարահարթ:

Լեզվաբանական այն հետեւությունը, ըստ որի՝ Ս. Օրբելյանի հիշատակած Խորեա տեղանունը հետագայում հիմք է եղել Կոռնիձոր գյուղանվան համար, տրամաբանորեն պետք է հաջորդի կարեւոր հարցերից մեկը. պատմահայր Մովսես Խորենացու անվան հիմքում կարող է լինել Խորեա տեղանունը³³: Լեզվաբանական տեսանկյունից կարող ենք վստահեցնել, ինչպես ժամանակին նկատել են, որ, այո՛, Խորեա³⁴ տեղանունը կարող է լինել Խորենացի անվան հիմքում: Այս եւ նման հարցեր, այնուամենայնիվ, գիտության հարաշարժության պարագայում միշտ էլ համակողմանի ուսումնասիրության կարիք են ունենում: Վերոնշյալ տեսակետները հաստատող կամ ժխտող կարծիքներ եղել եւ կլինեն, բայց կան փաստեր, որ դարերով անջնջելի են մնացել պատմական անցյալ ունեցող Սյունիքում՝ տեղանուններ, բարբառ, նյութական մշակույթի աղբյուրներ եւ այլն, ու դրանք շրջանցել հնարավոր չէ:

РЕЗЮМЕ

Современная деревня Корнидзор (Կոռնիձոր) и ее окрестности в разные времена были поселениями, где до сих пор сохранились древние кладбища,

³³ Խորենացուն վերաբերող ուսումնասիրություններում երբեմն ուշադրություն չի արժանացել կամ հարկ չի համարվել նշելու Հաբանդն գավառի Խորեա գյուղանունը: Օրինակ՝ Ն. Ակինյանը գրում է, որ «Խորենացի» յորջորջանքը պիտի ենթադրել (ընդգծումը մերն է՝ Մ. Ք., Լ. Ն.) Խորեան կամ Խորեն գաւառ մը կամ քաղաք մը. այսպիսի վայր ծանօթ չէ մեզ Հայաստանի սահմաններու մէջ»։ Ն. ԱԿԻՆՅԱՆ, Մատենագրական հետազոտություններ, հտ. Գ., Վրենա, 1930, էջ 290: Փաստորեն՝ եթե Ն. Ակինյանին ծանոթ լիներ Հաբանդն գավառի Խորեա գյուղը, ապա շատ հավանական է, որ պատմահոր անունը այստեղից կբխեցներ:

³⁴ Ստ. Մալխասյանցը նույնպես այն կարծիքին է, որ Սյունիքի Խորեա տեղանունը քերթողահոր անվան հիմքում է եւ այնուամենայնիվ նշում է, որ «այս փոփոխությունը (խոսքը վերաբերում է Ն. դարի «Խորեան» ձեւի ԺԳ. դարում «Խորեայ» դառնալուն՝ Մ. Ք., Լ. Ն.) որքան էլ լեզվաբանորեն ընդունելի լինի, այնուամենայնիվ բավական չէ Խորեայ-Խորեան գյուղը Մովսես Խորենացու ծննդավայրը համարելու, քանի որ կարող է պատահական զուգահեռություն համարվեր»։ ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆ, Խորենացու առեղծվածի շուրջ, Երեւան, 1940, էջ 145:

дохристианские памятники, часовни. Сведений о деревне не так много. Первые записи, где упоминается Корнидзор, относятся к XVIII–XIX векам. В основу названия деревни вошли два основных названия этой местности — Кирицор (Կիրիծրօ) или Гиращор (Գիրիծրօ) и Хорхор (Խորխոր). Корнидзор четыре раза менял местоположение. Самое старое название деревни — Хореа (Խորեա). В исследовательских работах вокруг названия «Корнидзор» этот вопрос отсутствует. В упоминаниях С. Орбеляна слово «Корнидзор» является искаженным вариантом названия деревни Хореай, которое в разговорной речи местных жителей изменилось и превратилось в диалект. По мнению некоторых авторов, Корнидзор — это поселение Хореай, где жил отец армянской историографии Мовсес Хоренаци.

SUMMARY

At different periods of time, the current village of Kornidzor and its surroundings have been settlements, where ancient cemeteries, pre-Christian monuments, chapels are still preserved. Information about the village is scant. The first records mentioning Kornidzor date back to the 18th and 19th centuries. The basis of the village name is comprised of two main toponyms - Kiritsor or Giratsor and Khorkhor. Kornidzor changed its location four times. The oldest name of the village is Khorea. In research papers about the name Kornidzor this question is left out. In S. Orbelyan's references, the word Kornidzor is the distorted version of the village name Khorea, which in colloquial speech of local residents was changed and turned into a dialect. According to some authors, Kornidzor is the same Khorea, where the father of Armenian historiography Movses of Khoren lived.

